ArmLur.am

I SSN 1829-2763

9 771829 276006 26079

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

19 հունիսի ուրբաթ 2026
տպագրության ԺԵ տարի

79
(3288)

100 դրամ

ք. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՄԻՆՉ ՕՐՍ ԿԱԼԱՆՔԻ ՏԱԿ Է

Մեկ տարի առաջ այս օրերին ազգային բարերար, «Տաշիր» ընկերությունների սեփականատեր Սամվել Կարապետյանը կալանավորվեց Երեւանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի որոշմամբ ու մինչ օրս կալանքի տակ է: Հիշեցնենք, որ մեկ տարի առաջ՝ 2025թ. հունիսի 18-ին, Սամվել Կարապետյանին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 422-րդ հոդվածի 2-րդ մասով, այն է՝ իշխանությունը զավթելու, տարածքային ամբողջականությունը խախտելու, ինքնիշխանությունից հրաժարվելուն կամ սահմանադրական կարգը բռնի տապալելուն ուղղված հրապարակային կոչը, որը կատարվել է հրապարակայնորեն ցուցադրվող ստեղծագործությունները կամ զանգվածային լրատվության միջոցները կամ տեղեկատվական կամ հաղորդակցական տեխնոլոգիաներն օգտագործելով: Առիթը նրա մի հարցազրույցն էր. Սամվել Կարապետյանը, անդրադառնալով եկեղեցի-իշխանություն հարաբերություններին, ասել էր. «Մի փոքրիկ խմբակ, մոռանալով հայոց պատմությունը, հայ եկեղեցու հազարավոր տարիների պատմությունը, հարձակվել է հայոց եկեղեցու վրա, հայ ժողովրդի վրա…: Քանի որ ես միշտ եղել եմ հայ եկեղեցու կողքին ու հայ ժողովրդի կողքին, ունենալու եմ անմիջական մասնակցություն: Եթե չհաջողվի քաղաքական գործիչներին, ուրեմն մենք էլ մեր ձեւով ենք մասնակցելու էդ ամեն ինչին»:

Լրատվամիջոցին տված հարցազրույցն էլ դարձել է քրեական վարույթ նախաձեռնելու հիմք:

Ավելի քան կես տարվա բանտարկությունից հետո գործարար Սամվել Կարապետյանը տարեվերջին բանտից տուն տեղափոխվեց: Տնային կալանքի հետ դատավորն ամենաբարձր գրավը սահմանեց՝ 4 միլիարդ դրամ: Այժմ գործը Հակակոռուպցիոն դատարանում է:

Ասել է թե, բարդ ստորադասական նախադասություն արտաբերելու համար գործարարը կալանքի տակ է. կես տարի՝ ԱԱԾ մեկուսարանում, իսկ հիմա էլ՝ տանը:

Հայաստանում արդեն մի քանի շաբաթ է՝ ներքաղաքական բանավեճի կենտրոնում հայտնվել է «300 հազար ադրբեջանցիների բնակեցման» թեման: Ընդդիմադիր ուժերը պնդում են, որ խաղաղության գործընթացի հաջորդ փուլերից մեկը կարող է դառնալ ադրբեջանցիների բնակեցման հարցը, մինչդեռ իշխանությունները կտրականապես հերքում են նման պնդումները՝ դրանք որակելով քաղաքական շահարկում եւ քարոզչական հնարք: Սակայն հետաքրքիր է, որ այն ժամանակ, երբ Երեւանում քննարկում են՝ գոյություն ունի արդյոք նման օրակարգ, թե ոչ, Ադրբեջանում այդ ուղղությամբ աշխատանքները շարունակվում են պետական մակարդակով եւ բավականին համակարգված կերպով: Հունիսի 18-19-ին Նախիջեւանի Օրդուբադ քաղաքում անցկացվում է «Արեւմտյան Ադրբեջան վերադարձի» III կոնգրես-փառատոնը, որի կազմակերպիչներն են Ադրբեջանի նախագահի լիազոր ներկայացուցչությունը Նախիջեւանում, Ադրբեջանի կրթության եւ գիտության նախարարությունը, Նախիջեւանի պետական համալսարանը եւ «Արեւմտյան Ադրբեջանի համայնքը»: Միջոցառման շրջանակում նախատեսված են գիտական, մշակութային եւ հասարակական բնույթի քննարկումներ, որոնց հիմնական նպատակը, ըստ կազմակերպիչների, «Արեւմտյան Ադրբեջանի պատմամշակութային ժառանգության հանրահռչակումն ու բնակեցման գաղափարի տարածումն է»:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում



«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ «Ուժեղ Հայաստան» կուսակցությունների դաշինքի պատգամավորի թեկնածու, իրավապաշտպան Արամ Վարդեւանյանը թիմակիցներին արդեն հայտնել է, որ պատգամավորական մանդատ ստանալու դեպքում այն իրեն հետաքրքիր չէ: Մեր աղբյուրների փոխանցմամբ՝ եթե ընդդիմադիր նոր ուժերը որոշեն վերցնել մանդատներն ու մտնել Ազգային Ժողով, ապա Վարդեւանյանը պատրաստվում է հրաժարվել իր մանդատից: Թեմայի շուրջ պարզաբանում ստանալու նպատակով դիմեցինք Արամ Վարդեւանյանին: Վերջինս ո՛չ հաստատեց, ո՛չ էլ հերքեց տեղեկությունը՝ նշելով, որ առաջին հերթին կիարգի թիմի միասնական դիրքորոշումը: Միաժամանակ նա ընդգծեց, որ այս փուլում նման հարցերի մասին խոսելը վաղ է, քանի որ առաջիկայում պատրաստվում են Սահմանադրական դատարանում վիճարկել ընտրությունների արդյունքները: Այսպիսով, մինչ ընդդիմադիր դաշտը դեռ պայքարում է ընտրությունների արդյունքների շուրջ, արդեն շրջանառվում են տեղեկություններ, որ ապագա մանդատների հարցում ոչ բոլոր թեկնածուներն են պատրաստվում զբաղեցնել իրենց տեղը խորհրդարանում:



Երեկ գրել էինք, որ 2021թ. նախկին պատգամավոր Արմեն Եղիազարյանը, հղում անելով Համաշխարհային բանկի տվյալներին, աղմկահարույց հայտարարություն էր արել՝ պնդելով, որ 2018թ. Ադրբեջանից Հայաստան փոխանցվել է շուրջ 211 միլիոն ԱՄՆ դոլար: «Ժողովուրդ» օրաթերթը հարցում էր ուղարկել Կենտրոնական բանկ՝ խնդրելով պարզաբանել, թե արդյոք գոյություն ունեն տվյալներ 2018թ. Ադրբեջանից Հայաստան փոխանցված 211 միլիոն դոլարի վերաբերյալ, եւ որքանով են այդ թվերը համապատասխանում իրականությանը, ինչ նպատակ ունեն, ում կողմից են արվել եւ այլն: Արդյո՞ք Կենտրոնական բանկը իրականացրել է որեւէ վերլուծություն՝ կապված այդ տվյալների հնարավոր անվտանգային, ֆինանսական կամ տնտեսական ռիսկերի գնահատման հետ, եւ եթե ոչ՝ ինչ պատճառաբանությամբ: Կենտրոնական բանկը նախ նշել է, որ Համաշխարհային բանկի կողմից հրապարակված տվյալները «միայն հանդիսանում են փորձագիտական գնահատականներ՝ հիմնված միգրանտների վերաբերյալ տվյալների վրա»: ԿԲ-ի պարզաբանմամբ՝ հաշվարկների հիմքում դրված են ոչ թե փաստացի դրամական փոխանցումները, այլ միգրացիոն վիճակագրությունը: «Մասնավորապես, ըստ ՀԲ-ի տվյալների, Հայաստանում Ադրբեջանից եկած 87 հազար միգրանտ է առկա, իսկ Ադրբեջանում՝ Հայաստանից գնացած 146 հազար միգրանտ: Նշենք, որ վերջիններս հանդիսանում են տեղափոխվածներ, այլ ոչ թե փոխանցում ստացող եւ/կամ իրականացնող ֆիզիկական անձինք»,- հայտնել են ԿԲ-ից:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

«ՈՐԵՎԷ ՃՆՇՈՒՄ ԿԱՄ ՊԱՐՏԱԴՐԱՆՔ ՉԿԱ»

ArmLur.am-ը զրուցել է ԱԺ ՔՊ պատգամավոր Նարեկ Բաբայանի հետ:

- Պարոն Բաբայան, ինչպե՞ս եք գնահատում ընտրությունների արդյունքները՝ հաշվի առնելով, որ Կենտրոնական ընտրական հանձնաժողովն արդեն հրապարակել է վերջնական տվյալները:

- Ընդհանուր առմամբ, ընտրությունները գնահատում եմ դրական: Մենք ստացել ենք ավելի շատ քվե, քան նախորդ ընտրություններում: Իհարկե, չեմ կարող հստակ ասել, թե որոշ քաղաքական ուժերի կողմից բաժանված ընտրակաշառքն ինչ չափով է ազդել արդյունքների վրա, սակայն կարծում եմ՝ դրա ազդեցությունը բավականին մեծ է եղել: Այդ առումով դեռ շատ աշխատանք կա անելու:

- Ընդդիմությունը ձեզ մեղադրում է վարչական ռեսուրս կիրառելու մեջ: Ի՞նչ կասեք այդ մասին:

- Նախ՝ պետք է հասկանալ, թե ինչ է նշանակում «վարչական ռեսուրս»: Հաճախ ասում են, թե պետական աշխատողները ենթարկվում են իշխանություններին եւ քվեարկում այնպես, ինչպես նրանց հուշում են: Ես, օրինակ, Սերժ Սարգսյանի նախագահության տարիներին աշխատել եմ էկոնոմիկայի նախարարությունում եւ երբեք նրան ձայն չեմ տվել: Ցանկացած մարդ, ով նման հայտարարություններ է անում, փաստորեն շատ վատ կարծիք ունի հազարավոր պետական աշխատողների մասին՝ կարծելով, թե նրանք չեն հասկանում եւ չեն գիտակցում իրենց ընտրության կարեւորությունը:

Բացի այդ, վարչական ռեսուրսի օգտագործման վերաբերյալ որեւէ ապացույց չի ներկայացվել: Պետական համակարգում աշխատող հազարավոր մարդիկ քվեարկում են ազատ՝ իրենց կամքով: Որեւէ ճնշում կամ պարտադրանք չկա:

Վարչական ռեսուրսի կիրառումը եղել է տարիներ առաջ, երբ մարդկանց ցուցակներով տանում էին հանրահավաքների: Նրանք, ովքեր երկար տարիներ զբաղվել են նման գործելակերպով, այսօր նման մեղադրանքներ են հնչեցնում, ինչը, անկեղծ ասած, անլուրջ եմ համարում:

- Իսկ ինչո՞ւ Ադրբեջանը չի շնորհավորել Նիկոլ Փաշինյանին ընտրությունների արդյունքների կապակցությամբ:

- Այդ հարցը պետք է ուղղել Ադրբեջանի ղեկավարությանը: Նրանք են կարող պատասխանել, թե ինչու նման շնորհավորանք չի եղել:

Զրուցեց՝ ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆԸ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՀԱՄԱԿԱՐԳԸ ԿԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՎԻ

ՀՀ ԱԺ հունիսի 17-ին գումարված հերթական նիստում քննարկվել է Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխությունների նոր փաթեթ, որի նպատակն է կատարելագործել ֆինանսական հաշիվների միջազգային փոխանակման արդեն գործող համակարգը: Հիմնական զեկուցող, ՊԵԿ նախագահի տեղակալ Ռաֆայել Գեւորգյանը նշել է, որ նախագիծը միտված է հստակեցնել եւ կարգավորել այն մեխանիզմները, որոնցով ՀՀ հարկային մարմինն օտարերկրյա գործընկերներից ստանում է ՀՀ ռեզիդենտների բանկային հաշիվների վերաբերյալ տվյալներ, ինչպես նաեւ փոխադարձաբար տրամադրում համապատասխան տեղեկատվություն:

Ռաֆայել Գեւորգյանի խոսքով՝ օրենսդրական փոփոխություններով հստակեցվում են մի շարք, այդ թվում՝ «հաշվետու հաշիվ» եւ «հաշվետու ֆինանսական կազմակերպություն» հասկացությունները, որոնք այժմ ներառում են ոչ միայն բանկերը, այլեւ ներդրումային ֆոնդերն ու այլ ֆինանսական ծառայություններ մատուցող կառույցները:

Բացի այդ, ըստ նրա, նախատեսվում են ընթացակարգային փոփոխություններ, որոնց շրջանակում հաշվետու ֆինանսական հաստատություններում կիրականացվեն թեմատիկ հարկային ստուգումներ՝ ուղղված ֆինանսական հաշիվների տվյալների համապատասխանության ու ճշտության ստուգմանը:

Զեկուցողն ընդգծել է, որ Հայաստանը միջազգային կոնվենցիայի շրջանակում ֆինանսական տեղեկատվության փոխանակումն իրականացնում է արդեն մեկ տարի, եւ անցյալ տարի հայկական կողմը տվյալներ է փոխանակել ավելի քան 40 երկրների հետ՝ փոխադարձության սկզբունքով, նպատակ ունենալով հետագայում ընդլայնել այս ցանկը՝ ներգրավելով կոնվենցիային անդամակցող բոլոր պետություններին:

Նախագծով նաեւ սահմանվում են այն հետեւանքները, որոնք կարող են կիրառվել ֆինանսական հաստատությունների նկատմամբ խախտումներ հայտնաբերելու դեպքում:

ԱԺ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի դրական եզրակացությունը ներկայացրել է Ալեքսանդր Ավետիսյանը: Հարցը քննարկվել է առաջին ընթերցմամբ:

ԿԱՅԱՑԵԼ Է ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԸ

Փոխվարչապետ Տիգրան Խաչատրյանի գլխավորությամբ տեղի է ունեցել Հյուսիս-հարավ ճանապարհային ծրագրերի կառավարման խորհրդի հերթական նիստը: Նիստի ընթացքում քննարկվել են Քաջարանի 7կմ թունելի շինարարության եւ թունելին մոտեցնող շուրջ 4կմ երկարությամբ ճանապարհի վերակառուցման ծրագրին առնչվող հարցերը: Անդրադարձ է կատարվել Քաջարանի թունելի կառուցման ծրագրի տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված միջազգային մրցույթի ֆինանսական առաջարկների գնահատման արդյունքներին:

Դիտարկվել են նաեւ Սիսիան-Քաջարան 60կմ ճանապարհի կառուցման ծրագրի շրջանակներում կառավարման խորհրդատուի եւ ճանապարհի 27 կմ հատվածի շինարարության տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների ձեռքբերման մրցութային գործընթացների առաջին փուլի արդյունքները:

Օրակարգային հարցերի շրջանակներում անդրադարձ է կատարվել նաեւ Բարգուշատի թունելի կառուցման նախագծի փորձաքննության իրականացման հարցերին:

Նիստի ավարտին փոխվարչապետ Տիգրան Խաչատրյանն ընգծել է նախատեսվող աշխատանքները քննարկման արդյունքներին համահունչ իրականացնելու կարեւորությունը՝ այդ նպատակով շահագրգիռ մարմիններին տալով համապատասխան հանձնարարականներ:

ԽՈՇՈՐ ԳՈՒՄԱՐ Է ՊԱՀԱՆՋՈՒՄ

Հայաստանի քաղաքական դաշտում խոսքի ազատության եւ զրպարտության շուրջ վեճերը նոր թափ են ստանում: Ըստ ArmLur.am-ի հասած տեղեկությունների՝ Ալեն Սիմոնյանը դատական հայց է ներկայացրել «Ուժեղ Հայաստան» կուսակցության խորհրդի նախագահ, ԱԺ պատգամավորի թեկնածու Նարեկ Կարապետյանի դեմ՝ պահանջելով հերքել իր մասին հրապարակված տեղեկությունները եւ փոխհատուցում վճարել ենթադրյալ զրպարտության համար: Հրապարակման համաձայն՝ Սիմոնյանը Կարապետյանից պահանջում է 3 միլիոն դրամ՝ որպես զրպարտության համար փոխհատուցում, ինչպես նաեւ 710 հազար դրամ դատական ծախսերի հատուցում, որից 600 հազար դրամը փաստաբանի վարձատրության, իսկ 110 հազար դրամը պետական տուրքի չափով: Սակայն դատական գործընթացների ցանկն այսքանով չի սահմանափակվում: Մեր տեղեկություններով՝ ԱԺ նախագահը դատի է տվել նաեւ Հայաստանի Ժուռնալիստների միության նախագահ Սաթիկ Սեյրանյանին: Այս գործով Սիմոնյանը պահանջում է 1 միլիոն դրամ փոխհատուցում՝ զրպարտության համար, ինչպես նաեւ 650 հազար դրամ դատական ծախսերի փոխհատուցում:

Ս. Գ.

ՊԱՏՐԱՍՏ Է ՆՊԱՍՏԵԼ

Ռուսաստանի արտաքին գործերի նախարարությունը հինգշաբթի օրը հայտարարել է, որ Մոսկվան պատրաստ է շարունակել դիվանագիտական աջակցություն ցուցաբերել Մերձավոր Արեւելքում երկարաժամկետ կայունացման հասնելու ջանքերին՝ ԱՄՆ-ի եւ Իրանի միջեւ փոխըմբռնման հուշագրի ստորագրումից հետո: «Մենք մեր պատրաստակամությունն ենք հայտնում շարունակել զգալի դիվանագիտական աջակցություն ցուցաբերել Մերձավոր Արեւելքում իրավիճակի կայուն եւ երկարաժամկետ կայունացմանն ուղղված ջանքերին», - ասվում է նախարարության կայքում տեղադրված հայտարարության մեջ:

ԿՈՉ Է ԱՆՈՒՄ ՊԱՇՏՊԱՆԵԼ

«Անկախ դիտորդ» դաշինքը կոչ է անում Երեւան քաղաքի Նուբարաշեն վարչական շրջանի 10/51, Արտաշատ համայնքի Աբովյան գյուղի 12/13, Մեղրի համայնքի Ագարակ քաղաքի 35/65 տեղամասերի ընտրողներին առանց վարանելու պաշտպանել իրենց ընտրական իրավունքը: «Անկախ դիտորդ» դաշինքը, ելնելով ՀՀ Սահմանադրության, Ընտրական օրենսգրքի, Մարդու իրավունքների Եվրոպական կոնվենցիայի, ՄԻԵԴ-ի նախադեպային որոշումների ուսումնասիրությունից, գտնում է, որ 10/51, 12/13 եւ 35/65 տեղամասերում հունիսի 7-ին Ընտրական օրենսգրքի կարգավորումներին համապատասխան քվեարկություն իրականացրած ընտրողների իրավունքները խախտված են: Այդ տեղամասերում վերաքվեարկություն չնշանակելով Կենտրոնական ընտրական հանձնաժողովը բացառել է իշխանություն ձեւավորելուն մասնակցելու նրանց իրավունքը:

ՀԱՍՏԱՏԵԼ Է ԾՐԱԳԻՐԸ

Երեկ տեղի է ունեցել ՀՀ Կառավարության հերթական նիստը, որը վարել է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը: Կառավարությունը հաստատել է հաշմանդամություն ունեցող անձանց եւ 63-ից բարձր տարիք ունեցող անձանց զբաղվածության ապահովման ծրագիրը, որի մշակումը պայմանավորված է 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն կամ ֆունկցիոնալության խորը կամ ծանր աստիճանի սահմանափակում ունեցող անձանց եւ 63-ից բարձր տարիք ունեցող անձանց զբաղվածության ապահովման հնարավորությունների մեծացման, աշխատաշուկայում նրանց մրցունակության բարձրացման եւ կայուն զբաղվածության ապահովման անհրաժեշտությամբ: Ծրագրի իրականացումը կնպաստի նրանց ակտիվ ներգրավվածությանը հասարակական եւ տնտեսական կյանքում՝ ապահովելով արժանապատիվ ինքնահիրացում, լրացուցիչ եկամուտների ձեւավորում եւ սոցիալական ակտիվության բարձրացում: Ըստ այդմ՝ առաջարկվում է աջակցություն տրամադրել այն գործատուներին (բացառությամբ հանրային ծառայություն իրականացնող մարմինների, ինչպես նաեւ այն կազմակերպությունների, որոնց կանոնադրական կապիտալում պետության կամ համայնքի մասնակցությունը կազմում է 50 եւ ավելի տոկոս), որոնք առնվազն 3-6 ամիս ժամկետով աշխատանքային պայմանագիր կկնքեն հաշմանդամություն ունեցող անձանց եւ 63-ից բարձր տարիք ունեցող անձանց հետ: Ընդ որում, աշխատանքային պայմանագիրը կարող է կնքվել ոչ լրիվ աշխատաժամանակի ռեժիմով: Ծրագրի շրջանակում առաջարկվում է գործատուին եռամսյակային կտրվածքով տրամադրել աշխատանքի տեղավորված անձի աշխատավարձից հաշվարկված եւ վճարված եկամտային հարկի փոխհատուցում՝ աշխատանքային գործունեության առաջին երեք ամիսների համար 50 %-ի չափով, բայց ոչ ավելի, քան ամսական 25 000 դրամը, աշխատանքային գործունեության 4-6-րդ ամիսների համար 100 %-ի չափով, բայց ոչ ավելի, քան 50 000 դրամը: Աշխատանքի տեղավորված անձի եւ գործատուի միջեւ աշխատանքային հարաբերությունները փոխհատուցումը տրամադրելուց հետո եւս մեկ տարի շարունակվելու դեպքում՝ առաջարկվում է գործատուին տրամադրել նաեւ միանվագ աջակցություն՝ 100 000 դրամի չափով: Առաջարկվում է ծրագիրը 2027 թ.-ին իրականացնել 200 շահառուի զբաղվածության ապահովման համար:

ՈՒՐԱՆԸ ԿՄՆԱ

Թեհրանը վերահաստատում է իր դիրքորոշումը, որ հարստացված ուրանը դուրս չի բերվի երկրից, հայտարարել է Իրանի արտաքին գործերի նախարարության խոսնակ Իսմայիլ Բաղային: «Մենք սկզբից էլ ասել ենք, որ հարստացված նյութերը երկրից չեն հանվի: Տարբերակ է Իրանի ներսում դրանց նոսրացումը: Սա նոր տարբերակ չէ»,-ասել է նա իրանական հեռուստատեսությամբ: Դիվանագետն այս հայտարարությունն արել է ԱՄՆ-ի հետ հակամարտության դադարեցման վերաբերյալ հուշագրի ստորագրման մասին հայտարարելուց հետո, որին պետք է հաջորդեն Իրանի միջուկային ծրագրի շուրջ բանակցություններ եւ հակաիրանական պատժամիջոցներ:

ՈՒՆԵՑՎԱԾՔ

ԻՆՉ Է ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԵԼ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԸ

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության 2026 թվականի ընտրական ցուցակից դուրս մնացած պատգամավորների շարքում է նաեւ Աժ պատգամավոր Ջուլիետա Ազարյանը: ՔՊ վարչությունն արդեն վերջնական որոշում է կայացրել՝ չընդգրկել նրան նախընտրական ցուցակում, ինչի արդյունքում գործող խորհրդարանի ավարտով ավարտվում է նաեւ նրա պատգամավորական գործունեությունը:

Եկամուտների կտրուկ աճ՝ երեք տարում
Պաշտոնական հայտարարագիրը ըստ տարիների

2022 թվականին նրա հայտարարագրված տարեկան եկամուտը կազմել է ընդամենը 544 հազար դրամ: Այդ ժամանակ նա ուներ շուրջ 1 մլն դրամ կանխիկ միջոց, Առինջ համայնքում գտնվող բնակարանի 1/2 բաժնեմաս եւ շուրջ 14 մլն դրամ հիփոթեքային պարտավորություն:

Արդեն 2023 թվականին նրա եկամուտները հասել են մոտ 7.9 մլն դրամի: Նույն տարում նա ձեռք է բերել հողամաս Արմավիրի մարզի Փարաքար համայնքում, իսկ ֆինանսական միջոցները համալրվել են նաեւ դոլարային խնայողություններով: 2024 թվականին նրա հայտարարագրված եկամուտները գերազանցել են 8.7 մլն դրամը, իսկ գույքային ցանկում պահպանվել են երկու բնակարանային իրավունքներն ու հողամասը:

Աժ պատգամավորից՝ BYD-ի սեփականատեր

2025 թվականի հայտարարագիրը ցույց է տալիս, որ Ազգային Ժողովի պատգամավորի կարգավիճակում Ջուլիետա Ազարյանի հիմնական եկամուտը կազմել է 12 մլն 253 հազար դրամ աշխատավարձ, որին ավելացել է ավելի քան 1 մլն դրամ եկամտային հարկի վերադարձը: Ընդհանուր տարեկան եկամուտը հասել է 13 մլն 267 հազար դրամի: Նույն տարում պատգամավորը ձեռք է բերել 2024 թվականի արտադրության BYD մակնիշի ավտոմեքենա՝ 7 մլն 900 հազար դրամ արժեքով: Նրա գույքային ցանկում շարունակում են մնալ.

Փարաքար համայնքում գտնվող հողամասը,

Աբովյան քաղաքում գտնվող բնակարանի 1/2 բաժնեմասը:

Բանկային հաշիվներում առկա միջոցները տարվա վերջում կազմել են ավելի քան 4.6 մլն դրամ, կանխիկ միջոցները՝ 1.1 մլն դրամ եւ 8 հազար ԱՄՆ դոլար:

Գույքի աճին զուգահեռ՝ աճել են նաեւ պարտքերը

Սակայն գույքի եւ դրամական միջոցների ավելացման հետ մեկտեղ պահպանվել են նաեւ զգալի վարկային պարտավորությունները: 2025 թվականի դրությամբ Ազարյանն ունեցել է.

13 մլն դրամից ավելի հիփոթեքային վարկ,

7.6 մլն դրամի չափով եւս մեկ վարկ:

Ընդհանուր վարկային բեռը կազմել է ավելի քան 20.6 մլն դրամ:

Այսպիսով, ՔՊ-ի ցուցակից դուրս մնացած պատգամավոր Ջուլիետա Ազարյանը խորհրդարանից հեռանում է անշարժ գույքով, նոր ձեռք բերված ավտոմեքենայով, միլիոնավոր դրամների խնայողություններով, բայց նաեւ ավելի քան 20 միլիոն դրամի վարկային պարտավորություններով:

Քաղաքական առումով նրա անունը չի հայտնվել 2026 թվականի ընտրական ցուցակում, ինչը փաստացի նշանակում է, որ գործող խորհրդարանի ավարտով ավարտվում է նաեւ նրա պատգամավորական կարիերայի այս փուլը:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

90,000 ԵՎՐՈ ՓՈԽՀԱՏՈՒՅՈՒՄ

Երեկ Եվրոպական դատարանը հրապարակեց Ապրիլյան 4-օրյա պատերազմի գործերով առաջին վճիռը: Այս մասին գրել է Միջազգային իրավական հարցերով ներկայացուցչի գրասենյակի նախկին ղեկավար Լիպարիտ Դրմեյանը: «ՄԻԵԴ-ը, ի թիվս այլնի, արձանագրել է, որ Ադրբեջանը խախտել է հայ զինծառայողի կյանքի իրավունքը եւ խոշտանգումների արգելքը (գլխատում եւ մարմնի պղծում): Ադրբեջանին պարտավորեցրել է 90,000 եվրո փոխհատուցում վճարել զոհի հարազատներին: Սա կարեւոր նախադեպ է 2020 թվականի 44-օրյա պատերազմի ժամանակ տուժածների իրավունքների պաշտպանության համար տարված գանգատներով: Այս դրվագը Ապրիլյանի ամենածանր դեպքերից մեկն էր, երբ թշնամին դարանակալել էր հայկական զինուժի զինծառայողներին եւ հետո գլխատել ու պղծել նրանց մարմինները (այս մասին մանրամասն ներկայացված է ՄԻԵԴ-ի վճռում): Հատուկ շնորհակալություն դիմումատուների փաստաբանական թիմին: Հայաստանը այս գործերով ներգրավված էր որպես երրորդ կողմ՝ ըստ դատարանի ընթացակարգերի, եւ չնայած Ադրբեջանը շարունակաբար հերքում էր իր մեղավորությունը, բայց մանրակրկիտ աշխատանքի արդյունքում հնարավոր եղավ ներկայացնել անհերքելի ապացույցներ, այդ թվում ադրբեջանական լրատվական ալիքներից նյութեր, որտեղ ադրբեջանցի հատուկ ջոկատայինները ներկայացնում էին այդ «հերոսական դրվագը»»,-գրել է նա:

ԱՌԱՋԱՐԿԵԼ Է ՋՐԿԵԼ

Նիդերլանդները պաշտպանում է ԵՄ արտաքին եւ պաշտպանական քաղաքականության որոշումների կայացման գործընթացում միաձայնության սկզբունքից հրաժարվելը՝նշելով ԵՄ-ի կողմից միջազգային ճգնաժամերին եւ անվտանգության մարտահրավերներին արձագանքը արագացնելու անհրաժեշտությունը: Այս մասին նշվում է Նիդեռլանդների 2026-2030 թվականների միջազգային անվտանգության ռազմավարության մեջ: Փաստաթղթում նշվում է, որ երկրի իշխանությունները մտադիր են անցնել որակյալ մեծամասնության քվեարկության, քանի որ, ըստ երկրի իշխանությունների, ԵՄ-ն «այլեւս չի կարող սպասել կոնսենսուսի. աշխարհաքաղաքական իրականությունը ստիպում է ընտրություն կատարել»: Կառավարությունը նաեւ կարծում է, որ ԵՄ-ն պետք է դառնա ավելի անկախ խաղացող անվտանգության ոլորտում եւ կարողանա ավելի արագ որոշումներ կայացնել աշխարհաքաղաքական մրցակիցների հետ աճող դիմակայության պայմաններում: Հաագան նաեւ պաշտպանում է պատժամիջոցների ճնշման ընդլայնված կիրառումը, հիբրիդային սպառնալիքներին հակազդելը եւ քաղաքացիական պաշտպանությունը ԵՄ մակարդակով: Վետոն մնում է ԵՄ պետությունների ազգային ինքնիշխանությունը արտաքին եւ անվտանգության քաղաքականության մեջ պաշտպանելու հիմնական մեխանիզմը: Արտաքին եւ անվտանգության ընդհանուր քաղաքականության շրջանակներում որոշումները դեռեւս մեծ մասամբ կայացվում են միաձայն, ինչը թույլ է տալիս ցանկացած երկրի արգելափակել իր շահերին հակասող նախաձեռնությունները: Այս մեխանիզմը վերջին տարիներին բազմիցս խոչընդոտել է Ռուսաստանի դեմ նոր պատժամիջոցների ընդունմանը եւ Ուկրաինային ռազմական օգնության հատկացմանը՝ դժգոհություն առաջացնելով Բրյուսելում եւ ԵՄ մի շարք անդամ երկրներում:

ԻՐԱՎԱԿԱՆ

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՈՎ

ՓՈՐՁ Է ԿԱՏԱՐՎԵԼ ԻՐԱՑՆԵԼ 10 ԿԳ «ՄԱՐԻԽՈՒԱՆԱ»

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի մաքսանենգության դեմ պայքարի վարչությունը շարունակում է անզիջում պայքարը թմրամիջոցների եւ հոգեմետ նյութերի՝ Հայաստանի Հանրապետության սահմանով անօրինական տեղափոխման ուղղությամբ:

Օրերս ՀՀ ՊԵԿ մաքսանենգության դեմ պայքարի վարչություն օպերատիվ տվյալներ են ստացվել այն մասին, որ ԻԻՀ քաղաքացին պատրաստվում է ՀՀ պետական սահմանով՝ մաքսանենգ եղանակով Հայաստան ներմուծել առանձնապես խոշոր չափի՝ 10 կիլոգրամ «մարիխուանա» տեսակի թմրամիջոց: Իրականացված օպերատիվ հետախուզական միջոցառումների արդյունքում պարզվել է, թե՛ թմրամիջոցների տեղափոխելու եղանակը եւ թե՛ այն տեղափոխող ու ստացող անձանց ինքնությունը: Թմրամիջոցի մաքսանենգություն կատարելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի առկայության հիմքով Երեւան քաղաքի հյուրանոցներից մեկի հարակից տարածքից ձերբակալվել եւ Մաքսանենգության դեմ պայքարի վարչություն են տեղափոխվել ԻԻՀ քաղաքացիներ Հ.Ա.-ն եւ Մ.Թ-ն: Ձերբակալված անձինք ներկայացվել են ՀՀ քննչական կոմիտեի տնտեսական հանցագործությունների եւ մաքսանենգությունների քննության գլխավոր վարչություն, որտեղ ՀՀ քրեական օրենսգրքի 393-րդ եւ 399-րդ հոդվածների հատկանիշներով նախաձեռնված քրեական վարույթի շրջանակում նրանք ձերբակալվել են: Դատարանի համապատասխան որոշումների հիման վրա նրանց նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը:

ՀՀ ՊԵԿ Մաքսանենգության դեմ պայքարի վարչության, ՀՀ ԱԱԾ, ՀՀ ՆԳՆ ոստիկանության պարեկային ծառայության եւ ՀՀ ՔԿ տնտեսական հանցագործությունների եւ մաքսանենգությունների քննության գլխավոր վարչության աշխատակիցների կողմից ձեռնարկված քննչական եւ օպերատիվ-հետախուզական միջոցառումների ընթացքում տվյալներ են ստացվել, որ հիշյալ մարիխուանա տեսակի թմրամիջոցի մի մասը՝ 3 կիլոգրամը, ՀՀ տարածքում պետք է փոխանցվեր այլ անձանց: Պարզվել է, որ 3 կիլոգրամ մարիխուանա տեսակի թմրամիջոցը ձեռք են բերելու ՀՀ 2 քաղաքացի: Վերջիններս իրացման նպատակով առանձնապես խոշոր չափի թմրամիջոց ձեռք բերելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի առկայության հիմքով Երեւան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանից ձերբակալվել եւ տեղափոխվել են ՊԵԿ մաքսանենգության դեմ պայքարի վարչություն:

Ձերբակալված Ա.Գ-ն եւ Է.Խ-ն ներկայացվել են ՀՀ քննչական կոմիտեի տնտեսական հանցագործությունների եւ մաքսանենգությունների քննության գլխավոր վարչություն, եւ ՀՀ քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածի հատկանիշներով նախաձեռնված քրեական վարույթի շրջանակում ձերբակալվել են:

Իրականացված խուզարկությունների արդյունքում հայտնաբերվել եւ վերցվել են քրեական վարույթի համար կարեւոր նշանակություն ունեցող իրեր: Ձեռնարկված օպերատիվ-հետախուզական եւ քննչական միջոցառումները շարունակվում են՝ վերոնշյալ թմրամիջոցների ապօրինի շրջանառության մեջ ներգրավված հնարավոր այլ անձանց ինքնությունը պարզելու ուղղությամբ:

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

ԽԱՂԱՄՈԼՈՒԹՅԱՆ ԿԱՆԽՈՒՄ

Վերջին տարիներին խաղային ոլորտն էական փոփոխություն է կրել: Այժմ հասանելի են ինտերնետ կայքեր, բջջային հավելվածներ, որոնց միջոցով խաղադրույք կատարելն ու ինտերնետ շահումով խաղերին մասնակցելը դարձել է հասանելի եւ մի շարք մարտահրավերներ են առաջացել: Առաջարկվող կարգավորումները կօգնեն առավել արդյունավետ կիրառել գործող սահմանափակումները: Այս մասին հայտնել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ Ռաֆայել Գեւորգյանը՝ առաջին ընթերցմամբ քննարկման ներկայացնելով «Խաղային գործունեության կարգավորման մասին», «Գովազդի մասին» եւ կից օրենքներում փոփոխություններ եւ լրացումներ նախատեսող օրենսդրական փաթեթը:

Նշվել է, որ գործող սահմանափակումները պատշաճ կիրառվում են լիցենզավորված օպերատորների կողմից, սակայն ինտերնետ տիրույթում գրեթե չկան սահմանափակումներ, եւ Հայաստանում չլիցենզավորված օնլայն մի շարք խաղատներ իրենց ծառայություններն են առաջարկում եւ մատուցում ՀՀ քաղաքացիներին՝ անգամ հայերենով: Այս առումով գործող կարգավորումներն այդքան էլ արդյունավետ չեն:

Առաջարկվում է ներդնել պաշտպանության եռաստիճան համակարգ, որը, ըստ ՊԵԿ նախագահի տեղակալի, ամբողջովին չի վերացնի վտանգը, բայց էականորեն կնվազեցնի հնարավոր սպառնալիքները:

ՊԵԿ տիրույթում կստեղծվի ինտերնետային ռեսուրս, որտեղ ամենօրյա ռեժիմով աշխատակիցները կավելացնեն այն կայքերը, որոնք մշտադիտարկման արդյունքում ենթակա են արգելափակման: Դա կարող են տեսնել եւ ստուգել նաեւ այլ շահագրգիռ մարմիններ, այդ թվում՝ լիցենզավորված օպերատորները: Հեռահաղորդակցության կապի օպերատորները նման կայքերն արգելափակելու հնարավորություն կունենան:

Հայաստանում կարող են գործել միայն այն կայքերը, որոնք լիզանզավորված են Հայաստանի օրենսդրությամբ, իսկ մնացածը կարգելափակվեն:

Երկրորդ պաշտպանության շերտը վճարահաշվարկային համակարգերին է առնչվում: Վճարահաշվարկային համակարգն այսօր էլ սահմանափակումներ կիրառում է, բայց ոչ բավարար չափով: Այժմ առաջարկվում է ավելի համապարփակ արգելափակում:

Երրորդ պաշտպանության շերտը գովազդին է վերաբերում: Համաշխարհային գովազդային ծառայություններ մատուցող կազմակերպություններն օրենսդրորեն արգելք կունենան Հայաստանը թիրախավորելու, եթե խոսքը վերաբերում է խաղատների գովազդին:

Հարակից զեկույցում Տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի անդամ Սերգեյ Բագրատյանը կարեւորել է խաղամոլության դեմ պայքարը եւ օրենսդրական փաթեթի ընդունումը:

ԼՈՒՐԵՐ

ԹՄՐԱՄԻՋՈՑ ՊԱՀԵԼՈՒ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ԴԵՊՔԵՐ

Պարեկային ծառայության Երեւան քաղաքի գնդի ծառայողները հունիսի 14-ին իրականացրած գիշերային ծառայության ժամանակ թմրամիջոց պահելու եւ օգտագործելու մի շարք դեպքեր են բացահայտել: Մասնավորապես, Երեւան քաղաքի գնդի 3-րդ գումարտակի ծառայողները Քանաքեռ-Զեյթուն թաղամասում գտնվող գերեզմանատանը հայտնաբերել, թմրանյութ պահելու եւ օգտագործելու կասկածանքով ձերբակալել եւ Համայնքային ոստիկանության Քանաքեռ-Զեյթունի բաժին են տեղափոխել 23-ամյա մի երիտասարդի: Նրա անձնական խուզարկությամբ հայտնաբերվել է մարիխուանա տեսակի թմրամիջոցի նմանվող զանգված: 3-րդ գումարտակի ծառայողները ժամը 2.45-ի սահմաններում Արշակունյաց պողոտայում հայտնաբերել, թմրանյութ պահելու եւ օգտագործելու կասկածանքով ձերբակալել եւ Համայնքային ոստիկանության Կենտրոնականի բաժին են տեղափոխել 25-ամյա մի երիտասարդի: Նրա անձնական խուզարկությամբ հայտնաբերվել է մոխրացած հետքերով ապակե գլանակ: 3-րդ գումարտակի պարեկները գիշերային ծառայության ժամանակ թմրանյութ պահելու եւ օգտագործելու եւս մեկ դեպք են բացահայտել Արշակունյաց պողոտայում: Ժամը 4-ի սահմաններում ձերբակալվել եւ Համայնքային ոստիկանության Կենտրոնականի բաժին է տեղափոխվել 25-ամյա մի երիտասարդ: Նրա անձնական խուզարկությամբ հայտնաբերվել է թմրամիջոցի նմանվող զանգվածով փաթեթ:

Հունիսի 14-ին թմրամիջոցի ապօրինի շրջանառության դեպքեր են բացահայտել նաեւ Երեւան քաղաքի գնդի 2-րդ գումարտակի պարեկները: Ժամը 23.20-ի սահմաններում Զաքյան փողոցի հասցեներից մեկի մոտ հայտնաբերվել, ձերբակալվել եւ Համայնքային ոստիկանության Կենտրոնականի բաժին է տեղափոխվել 27-ամյա մի երիտասարդ, որի անձնական խուզարկությամբ հայտնաբերվել են մարիխուանա տեսակի թմրամիջոցի նմանվող զանգվածով փաթեթ եւ մոխրացած հետքերով կաթուցիչ: Երեւանի գնդի 2-րդ գումարտակի պարեկները թմրանյութ պահելու եւ օգտագործելու դեպք են բացահայտել նաեւ հունիսի 15-ին իրականացրած գիշերային ծառայության ժամանակ: Նրանք կեսգիշերն անց Աճառյան փողոցի 1-ին նրբանցքում հայտնաբերել, ձերբակալել եւ Համայնքային ոստիկանության Ավանի բաժին են տեղափոխել Արմավիր քաղաքում հաշվառված 23-ամյա մի երիտասարդի: Նրա անձնական խուզարկությամբ հայտնաբերվել են մարիխուանա տեսակի թմրամիջոցի նմանվող զանգվածով փաթեթ եւ մոխրացած հետքերով կաթուցիչ: Հունիսի 14-ին թմրամիջոց ձեռք բերելու, պահելու եւ օգտագործելու դեպք են բացահայտել նաեւ ՊԾ Երեւան քաղաքի գնդի 1-ին գումարտակի պարեկները: Նրանք Քըրք Քըրքորյան փողոցի հասցեներից մեկի մոտ հայտնաբերել, ձերբակալել եւ Համայնքային ոստիկանության Մաշտոցի բաժին են տեղափոխել 35-ամյա մի երիտասարդի: Նրա անձնական խուզարկությամբ հայտնաբերվել են մեթադոն տեսակի թմրամիջոցի նմանվող 7 դեղահաբ, ներարկիչներ, մոխրացած հետքերով լամպ եւ դանակ: Բոլոր դեպքերով կազմված փաստաթղթերն ուղարկվել են քննչական բաժիններ: Քննությամբ հանգամանքները բացահայտվում են:

ԱՆՕԴԱՉՈՒ ՍԱՐՔՈՎ

Հունիսի 17-ին՝ ժամը 04:10-ի սահմաններում, ՀՀ ԱՆ Արմավիր քրեակատարողական հիմնարկի դիտաշտարակներից մեկում ծառայություն իրականացնող պահպանության ապահովման բաժնի ծառայողը տեղեկացրել է, որ նկատել է անօդաչու թռչող սարք (դրոն): Նշված տարածքում անմիջապես իրականացված զննության արդյունքում հայտնաբերվել է անօդաչու թռչող սարքը՝ ձկնորսական լարով կախված արգելագոտու հիմնական պատից: Շարունակելով ձկնորսական լարի հետքով տեղանքի զննությունը՝ ծառայողները հիմնարկի տեղամասերից մեկի զբոսահրապարակի տանիքից էլ հայտնաբերել են լարին ամրացված, սեւ, կպչուն ժապավենով փաթեթավորված 1 փաթեթ, որում առկա է եղել բջջային 2 հեռախոս: Դեպքի առթիվ նախաձեռնվել են համապատասխան միջոցառումներ:

ՁԵՐԲԱԿԱԼԵԼ ԵՆ

Համայնքային ոստիկանության Քանաքեռ-Զեյթունի բաժնի ծառայողները ստացել էին տեղեկություն, որ մի վարորդ հունիսի 13-ին՝ գիշերվա ժամը 3.40-ի սահմաններում, Մինաս Ավետիսյան եւ Դրոյի փողոցների խաչմերուկում կատարել է դրիֆթ: Հետագա միջոցառումներով համայնքային ոստիկանները պարզեցին, որ այդ կերպ հասարակության նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսեւորել եւ համակեցության կանոններն ու մարդկանց անդորրը խախտել է Ուլնեցու փողոցի բնակիչ 21-ամյա երիտասարդը: Հունիսի 15-ին խուլիգանություն կատարելու կասկածանքով նա ձերբակալվել եւ տեղափոխվել է բաժին: Երիտասարդն ու կազմված փաստաթղթերը ներկայացվել են քննչական բաժին: Հանգամանքները պարզվում են:

● *ՀՀ-ում հունիսի 12-ից 15-ը բացահայտվել է խարդախության, խուլիգանության, թմրանյութի իրացման 1-ական դեպք:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՆԵՐԴՐՄԱՆ ԺԱՄԿԵՏՆ ԱՆՀԱՅՏ Է

Գյուղատնտեսությունը ռիսկային ոլորտ է, կարկուտը, սելավները, երաշտը, բնական ու տեխնածին աղետները սպառնալիքներ են գյուղացիական տնտեսությունների համար: Այդ ռիսկերը, գյուղատնտեսական նշանակության հողերի ցածր բերքատվությունը պատճառ են, որ Տավուշի մարզում տասնյակ հազարավոր հեկտար տարածքներ չեն մշակվում: Ամեն տարի կարկտահարությունների հետեւանքով Տավուշի մարզի գյուղացիները բերքի մեծ կորուստներ են ունենում: Մարզի Նոյեմբերյան համայնքի տարածքում տեղադրված են 14 հակակարկտային կայաններ, մարզի մյուս 3 համայնքներում՝ Դիլիջանում, Իջեւանում, Բերդում, հակակարկտային կայաններ չկան: Նիկոլ Փաշինյանի իշխանության 8 տարիներին նրա հայրենի Տավուշի մարզում հակակարկտային ոչ մի կայան չի տեղադրվել: Տավուշի մարզպետարանից լրագրողիս հայտնել են, որ մարզի համայնքներն իրենց ֆինանսական միջոցներով կարող են նման կայաններ տեղադրել: Այսինքն՝ պետությունը հակակարկտային կայաններ տեղադրելու գործն իրենից հեռացնում է, գցում սուղ բյուջեներ ունեցող համայնքների վրա:

Կարկտահարությունների, բնական այլ աղետների ռիսկերը կարող են մեղմվել գյուղատնտեսության ապահովագրությամբ, սակայն ապահովագրական ընկերությունները չեն ցանկանում ռիսկի դիմել՝ ապահովագրելով գյուղատնտեսության ոլորտը: Խնդիրը կարող է լուծվել գյուղատնտեսության պարտադիր պետական ապահովագրության համակարգի ներդրումով:

ՀՀ էկոնոմիկայի նախարար Գեւորգ Պապոյանին հարցում եմ արել, թե որ թվականին է նախատեսված Հայաստանում ներդնել գյուղատնտեսության պարտադիր ապահովագրություն: Նախարարությունից պատասխանել են. «Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության ոլորտի տնտեսական զարգացումն ապահովող հիմնական ուղղությունների 2020-2030 թվականների ռազմավարության «Դիվերսիֆիկացում եւ ռիսկերի կառավարում» սկզբունքում եւ «Բարձրացնել գյուղատնտեսության ոլորտի մրցունակությունը եւ արդյունավետությունը» առաջնահերթությունում կարեւորվում է ապահովագրական համակարգի աստիճանական ներդրումը: 2019 թվականից մեկնարկել է գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման պետական աջակցության փորձնական ծրագիրը, որի հիմնական նպատակն է գյուղատնտեսության ապահովագրության մեխանիզմների հստակեցումը եւ ամբողջական համակարգի ներդրումը: Փորձնական ծրագիրը դեռեւս իրականացվում է, հանրապետության ընդհանուր տարածքում գյուղատնտեսական պարտադիր ապահովագրության ներդրման ժամկետները դեռեւս հստակ չեն» :

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ԱՄՆ-ԻՐԱՆ

ՀԱՅՏՆԻ ԵՆ ՀՈՒՇԱԳՐԻ 14 ԿԵՏԵՐԸ

ԱՄՆ-ն եւ Իրանը հունիսի 17-ին համաձայնեցրել են 14 կետից բաղկացած խաղաղության հուշագիր (MOU), որի նպատակն է ամրագրել հրադադարը, վերականգնել նավագնացությունը Հորմուզի նեղուցում եւ 60 օրվա ընթացքում հասնել վերջնական խաղաղության համաձայնագրի:



ԱՄՆ-ի եւ Իրանի միջեւ կնքված 14 կետանոց համաձայնության հուշագրի ստորագրման լուսանկարները հրապարակվել են: Իրանական պետական IRNA գործակալության տարածած կադրերում երեւում է, թե ինչպես է Իրանի նախագահ Մասուդ Փեզեշքիանը ստորագրում փաստաթուղթը, որի ներքեւում առկա են ինչպես նրա, այնպես էլ ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի ստորագրությունները: CNN-ի փոխանցմամբ՝ Դոնալդ Թրամփը փաստաթղթի թղթային տարբերակը ստորագրել է Ֆրանսիայի Վերսալի պալատում՝ G7-ի գագաթնաժողովի շրջանակում: Այնուհետեւ ԱՄՆ կողմը ստորագրված փաստաթղթի լուսանկարն ուղարկել է Թեհրան, որտեղ այն ստորագրել է նաեւ Իրանի նախագահը: Մոտ 800 բառից բաղկացած համաձայնության հուշագիրը նախատեսում է ընդլայնել ԱՄՆ-ի եւ Իրանի միջեւ հաստատված հրադադարը, վերականգնել նավագնացությունը Հորմուզի նեղուցով եւ սկսել բանակցություններ վերջնական համաձայնագրի շուրջ, որը պետք է կնքվի առաջիկա 60 օրերի ընթացքում:

Փաստաթղթի համաձայն՝ ԱՄՆ-ը պատրաստվում է թույլատրել Իրանի նավթի արտահանումը, փուլային կերպով վերացնել պատժամիջոցները, ինչպես նաեւ տարածաշրջանային գործընկերների հետ ձեւավորել Իրանի վերականգնման եւ տնտեսական զարգացման շուրջ 300 միլիարդ դոլարի հիմնադրամ:

Հուշագրով նախատեսվում է նաեւ Հորմուզի նեղուցի վերաբացում միջազգային առեւտրային նավերի համար, ինչը կարեւոր նշանակություն ունի համաշխարհային էներգետիկ շուկաների համար: Համաձայնագիրը նախատեսում է ռազմական գործողությունների դադարեցում բոլոր ուղղություններով, այդ թվում՝ Լիբանանում: ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը հայտարարել է, որ համաձայնագրի պատճենն ուղարկվել է նաեւ Իսրայելին եւ կրկին քննադատել է Իսրայելի գործողությունները «Հեզբոլլահի» դեմ՝ նշելով, որ «նրանք կարող էին ավելի լավ վարվել»:

Թեեւ փաստաթուղթը համեմատաբար կարճ է եւ բազմաթիվ կարեւոր հարցեր թողնում է հետագա բանակցություններին, այն նախատեսում է Իրանի նկատմամբ պատժամիջոցների աստիճանական վերացում, նավթային արտահանման վերականգնում, սառեցված ակտիվների ապաշրջափակում եւ մինչեւ 300 միլիարդ դոլարի տնտեսական զարգացման ծրագիր:

Հիմնական դրույթները

1. Պատերազմի ավարտ

ԱՄՆ-ն եւ Իրանը պարտավորվում են անմիջապես եւ մշտապես դադարեցնել ռազմական գործողությունները բոլոր ուղղություններով, այդ թվում՝ Լիբանանում: Կողմերը նաեւ պարտավորվում են չսպառնալ միմյանց եւ չկիրառել ուժ:

2. Ինքնիշխանության հարգում

Կողմերը համաձայնում են հարգել միմյանց ինքնիշխանությունն ու տարածքային ամբողջականությունը եւ չմիջամտել ներքին գործերին: Սա նշանակում է, որ Վաշինգտոնը հրաժարվում է Իրանում իշխանափոխության քաղաքականությունից:

3. Վերջնական համաձայնագիր՝ 60 օրվա ընթացքում

Կողմերը նախատեսում են առավելագույնը 60 օրում մշակել եւ ստորագրել վերջնական խաղաղության համաձայնագիր, որը կարող է երկարաձգվել փոխադարձ համաձայնությամբ:

4. Ամերիկյան ծովային շրջափակման վերացում

ԱՄՆ-ն պարտավորվում է 30 օրվա ընթացքում ամբողջությամբ վերացնել Իրանի նկատմամբ կիրառվող ծովային շրջափակումը եւ հետ քաշել իր լրացուցիչ ռազմական ուժերը տարածաշրջանից:

5. Հորմուզի նեղուցի բացում

Իրանը համաձայնում է 60 օրով անվճար եւ անվտանգ անցում ապահովել առեւտրային նավերի համար Հորմուզի նեղուցով: Հետագայում նեղուցի կառավարման նոր մեխանիզմը պետք է մշակվի Օմանի եւ Պարսից ծոցի մյուս երկրների հետ:

6. 300 միլիարդ դոլարի տնտեսական փաթեթ

ԱՄՆ-ն տարածաշրջանային գործընկերների հետ նախատեսում է Իրանի վերակառուցման եւ տնտեսական զարգացման համար առնվազն 300 միլիարդ դոլարի ներդրումային ծրագիր:

Ֆինանսավորման մեխանիզմները պետք է հստակեցվեն վերջնական համաձայնագրում:

7. Պատժամիջոցների վերացում

Վաշինգտոնը պարտավորվում է վերացնել Իրանի նկատմամբ կիրառվող ամերիկյան եւ միջազգային պատժամիջոցները, ներառյալ ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի որոշ սահմանափակումներ:

8. Միջուկային ծրագիր

Իրանը վերահաստատում է, որ չի ստեղծելու եւ չի ձեռք բերելու միջուկային զենք: Սակայն ուրանի հարստացման եւ խաղաղ ատոմային էներգիայի ծրագրերի շուրջ վերջնական պայմանավորվածություններ դեռ չկան:

9. Ստատուս քվոյի պահպանում

Մինչեւ վերջնական համաձայնագիրը Իրանը պահպանում է իր ներկայիս միջուկային ծրագիրը, իսկ ԱՄՆ-ն պարտավորվում է նոր պատժամիջոցներ չսահմանել եւ տարածաշրջան լրացուցիչ զորքեր չուղարկել:

10. Նավթի արտահանման թույլտվություն

Հուշագրի ստորագրումից անմիջապես հետո ԱՄՆ-ն ժամանակավոր բացառություններ է տրամադրելու, որպեսզի Իրանը կարողանա արտահանել նավթ եւ նավթամթերք՝ օգտվելով նաեւ միջազգային բանկային եւ ապահովագրական ծառայություններից:

11. Սառեցված ակտիվների ապաշրջափակում

ԱՄՆ-ն համաձայնում է Իրանի համար հասանելի դարձնել սառեցված կամ սահմանափակված ֆինանսական միջոցները: Տարբեր գնահատականներով դրանց ծավալը կարող է կազմել 124-167 միլիարդ դոլար:

12. Վերահսկման մեխանիզմ

Ստեղծվելու է հատուկ համակարգ, որը կհետեւի հուշագրի եւ ապագա վերջնական համաձայնագրի կատարմանը:

13. Հաջորդ փուլերի բանակցություններ

Վերջնական համաձայնագրի շուրջ բանակցությունները կսկսվեն միայն այն բանից հետո, երբ կողմերը կատարեն առաջին փուլով ստանձնած հիմնական պարտավորությունները՝ Հորմուզի բացումը, շրջափակման վերացումը եւ ակտիվների ապաշրջափակումը:

14. ՄԱԿ-ի ԱԽ հաստատում

Վերջնական համաձայնագիրը պետք է հաստատվի ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի պարտադիր ուժ ունեցող բանաձեւով, ինչը դրա իրականացումը կդարձնի միջազգային իրավական պարտավորություն:

Ինչու է այս հուշագիրը կարեւոր

Փաստաթուղթը ենթադրում է Իրանի միջազգային մեկուսացման զգալի թուլացում: Եթե համաձայնագիրը կյանքի կոչվի, Թեհրանը կկարողանա վերադառնալ համաշխարհային նավթային շուկա, օգտվել սառեցված միլիարդավոր դոլարներից եւ ստանալ հսկայական ներդրումներ տնտեսության վերականգնման համար: Միեւնույն ժամանակ, ամենազգայուն հարցերից մեկը՝ Իրանի միջուկային ծրագրի ապագան, դեռեւս ամբողջությամբ լուծված չէ եւ լինելու է առաջիկա բանակցությունների հիմնական թեման:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԱՄՆ-Ն ՔՆՆԱՐԿՈՒՄ Է

Միացյալ Նահանգները քննարկում է ռուսական նավթի նկատմամբ պատժամիջոցներից ազատումների վերացման հարցը՝ համաշխարհային շուկաներում վառելիքի գների սպասվող անկման պատճառով: Սա հաստատել է ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը: «Մենք ուսումնասիրում ենք դա»,-ասել է նա՝ պատասխանելով լրագրողների հարցերին ռուսական նավթի նկատմամբ ԱՄՆ պատժամիջոցները վերականգնելու հնարավորության մասին: «Մենք տեսնում ենք, թե որքան է իջնում նավթի գինը: Այն իսկապես իջնում է: Այժմ, կարծես, մեկ բարելի համար կազմում է 74-75 դոլար: Շուտով այն կվերադառնա այնտեղ, որտեղ չորս ամիս առաջ էր»,-պնդել է ԱՄՆ նախագահը Ֆրանսիայի Էվիան-լե-Բեն քաղաքում G7 գագաթնաժողովի շրջանակներում Հնդկաստանի վարչապետ Նարենդրա Մոդիի հետ հանդիպումից հետո:

● *Հանրապետությունում հունիսի 12-ից 15-ը գրանցվել է զենք-զինամթերք կամավոր հանձնելու 2 դեպք:*

ԼՈՒՐԵՐ

ՀՈՒՇԱՐՁԱՆԸ ԿՏԵՂԱՓՈԽՎԻ

Կառավարությունն իր հունիսի 18-ի նիստում որոշում կայացրեց, որով նախատեսվում է թույլատրել Երեւանի քաղաքապետին՝ Երեւան քաղաքի Ծովակալ Իսակովի պողոտա եւ Սեբաստիա փողոցի խաչմերուկի հատվածում տեղադրված «Վահագն Վիշապաքաղ» հուշարձանը տեղափոխել Երեւան քաղաքի Ալեքսանդր Մյասնիկյանի անվան հրապարակի հարեւանությամբ՝ Երեւանի քաղաքապետարանի դիմաց գտնվող Ռուսաստանի հրապարակ: Հուշարձանը ներկայումս տեղակայված է Երեւանի քաղաքի խոշոր տրանսպորտային հանգույցներից մեկում՝ Ծովակալ Իսակովի պողոտայի եւ Սեբաստիա փողոցի խաչմերուկի հատվածում, որտեղ տրանսպորտային ինտենսիվ հոսքերի, ճանապարհային ենթակառուցվածքների եւ տարածքի կազմակերպման առանձնահատկությունների պատճառով հուշարձանը լիարժեք տեսանելի եւ ընկալելի չէ քաղաքացիների ու այցելուների համար: Ներկայիս տեղադրությունը չի ապահովում հուշարձանի գեղարվեստական եւ գաղափարական ամբողջական ընկալումը, ինչպես նաեւ սահմանափակում է դրա շուրջ մշակութային եւ հանրային միջավայրի ձեւավորման հնարավորությունը:

Հուշարձանի տեղափոխումը դեպի ավելի համապատասխան քաղաքաշինական միջավայր հնարավորություն կտա ապահովել դրա առավել լայն հանրային հասանելիությունը, բարելավել տեսանելիությունը, ընդգծել հուշարձանի մշակութային եւ խորհրդանշական նշանակությունը, ինչպես նաեւ ստեղծել պայմաններ դրա պահպանության եւ պատշաճ ներկայացման համար:

ՊԱՐՏՈՒԹՅԱՆ ՄԱՏՆԵՑ

Չինաստանի Հոնկոնգ քաղաքում անցկացվող արագ շախմատի աշխարհի թիմային առաջնությունում հայ գրոսմայստեր Շանթ Սարգսյանը պարտության մատնեց աշխարհի 16-րդ չեմպիոն Մագնուս Կարլսենին: 7-րդ խաղափուլում Սարգսյանը սպիտակ խաղաքարերով 41-րդ վայրկյանում հաղթանակի հասավ աշխարհում ամենաբարձր վարկանիշ ունեցող նորվեգացի Կարլսենի նկատմամբ: Sky Chess թիմի կազմում հանդես եկող Շանթ Սարգսյանը 7-րդ տուրից հետո ունի 4 միավոր, WR Chess թիմը ներկայացնող աշխարհի 16-րդ չեմպիոնը՝ 3 միավոր: 24-ամյա հայ գրոսմայստերն աշխարհի առաջնությունում տարել է 4 հաղթանակ, կրել 3 պարտություն: Առաջնությունում կանցկացվի 12-րդ տուր:

ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ

ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՎԱՍՏԱԳՐԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ

Կառավարությունը հաստատել է Պետական հավաստագրերի միջոցով հաշմանդամություն ունեցող անձանց խնամք եւ սոցիալ-վերականգնողական ծառայություններ տրամադրելու կարգը: Որոշման նպատակն է հզորացնել հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառմանն ուղղված խնամքի եւ սոցիալ-վերականգնողական ծառայությունները:

Ըստ այդմ՝ առաջարկվում է շահառուների լոգոպեդական, հոգեբանական, էրգոթերապեւտիկ, կինեզիոլոգիական կամ ադապտիվ ֆիզկուլտուրա, հատուկ մանկավարժի, սուրդոմանկավարժական, տիֆլոմանկավարժական ծառայությունները, ինչպես նաեւ՝ տնային պայմաններում խնամքի ծառայությունը, տրամադրել հաշմանդամություն ունեցող անձանց պետական հավաստագրերի միջոցով: Հավաստագրերի միջոցով ծառայություն մատուցելու համար անհրաժեշտ է կատարել մի շարք նախապատրաստական աշխատանքներ (համագործակցության պայմանագրերի կնքում եւ այլն), ինչպես նաեւ ստեղծել անհրաժեշտ տեղեկատվական համակարգ, ապահովել այլ տեղեկատվական համակարգերի հետ կապը եւ այլն: Հավաստագրի ստացումը իրականացվելու է միայն առցանց եղանակով՝ սոցիալական պաշտպանության միասնական տեղեկատվական e-social համակարգի «Հավաստագրեր» («e-voucher») ենթահամակարգի միջոցով: Սահմանվել է, որ եթե շահառուի նախընտրած ծառայության գինը բարձր է հավաստագրի համար սահմանված գնային արժեքից, ապա շահառուն իր ցանկությամբ կարող է ձեռք բերել նշված սոցիալական ծառայությունը՝ վճարելով արժեքի տարբերությունը:

Սահմանվել են նաեւ խնամքի եւ սոցիալ-վերականգնողական ծառայությունների տրամադրման ծավալները, ժամկետները՝ հիմք ընդունելով ոլորտային մասնագետների կարծիքները, շուկան եւ միջազգային փորձը: Պետական հավաստագրերով ծառայությունների տրամադրումը կապահովի նաեւ համայնքներում կազմակերպությունների թվի ավելացումը, ծառայությունների որակի բարելավմանը, հնարավորություն կտա հաշմանդամություն ունեցող անձին ապրելու իր տանը եւ իր համայնքում:

Ծառայությունների ներդրումը նախատեսվում է իրականացնել փուլային եղանակով: 2028 թ.՝ I փուլով, հավաստագրային մեխանիզմով նախատեսվում է ընդգրկել 0-5 տարեկան երեխաների, 2029 թ.՝ II փուլով՝ 6-24 տարեկան անձանց սոցիալ-վերականգնողական ծառայությունները, 2030 թ.-ից նախատեսվում է հավաստագրային մեխանիզմով տրամադրել բոլոր թիրախային խմբերի ծառայությունները՝ 0-5 (ներառյալ), 6-24 (ներառյալ), 25 տարեկանից բարձր անձանց սոցիալ-վերականգնողական ծառայությունները, ինչպես նաեւ տնային խնամքը:

Հիմնավորման համաձայն՝ ներկայումս իրականացվում է ապաինստիտուցիոնալացման խթանմանն ուղղված ծառայությունների համակարգի մոդելավորում, կսահմանվեն ապաինստիտուցիոնալացման սկզբունքները եւ դրան միտված քաղաքականության ուղղությունները:

Ներկայումս մշակման փուլում է ապաինստիտուցիոնալացման ճանապարհային քարտեզը, որի շրջանակներում պետք է ընդլայնվեն եւ զարգանան համայնքահեն ծառայությունները:

ՀԱՅԿԱԿԱՆ ԼՈԼԻԿԸ ԿԱՐՏԱՀԱՆՎԻ ԵՎՐՈՊԱ

Ակբա Լիզինգի աջակցությամբ «Պրոմ Գրուպ» ընկերությունը ձեռք է բերել Volvo մակնիշի 20 նորագույն բեռնատարներ, որոնց միջոցով արդեն այս տարվա հուլիսին հայկական բարձրորակ լոլիկը կարտահանվի Եվրոպա:

«Պրոմ Գրուպ» ընկերությունն արտահանումը կիրականացնի սեփական տնտեսությունից. Արագածոտնի մարզի Նոր Եդեսիա գյուղում ընկերությունն Ակբա բանկի աջակցությամբ հիմնել է 5-րդ սերնդի 10 հեկտար տարածքով ջերմոցային համալիր, որը տարածաշրջանում եզակի է արհեստական բանականության բարձր հագեցվածության շնորհիվ: Ջերմոցում նախատեսվում է ստանալ օրական 25-30 տոննա պրեմիում որակի լոլիկի բերք, որն անմիջապես արտահանվելու է: «Որպեսզի հայկական բարձրորակ լոլիկը կարողանանք հասցնել եվրոպացի սպառողին, Ակբա Լիզինգի աջակցությամբ ձեռք բերեցինք Volvo մակնիշի նորագույն բեռնատարներ, որոնց միջոցով մեր ջերմոցի բարձրորակ լոլիկը կարտահանվի Եվրոպա: Քանի որ կար արտահանման անհրաժեշտություն, որոշեցինք ստեղծել սեփական լոգիստիկ հնարավորությունները»,- նշում է «Պրոմ Գրուպի» հիմնադիր տնօրեն Հայկ Հունանյանը:

Ձեռք բերված բեռնատարները լիովին համապատասխանում են եվրոպական բարձր ստանդարտներինղ ի վիճակի են տեղափոխել մինչեւ 22 տոննա բեռ՝ ճանապարհին ապահովելով դրանց անթերի պահպանումը: Մեքենաները հագեցած են տեխնիկական լավագույն լուծումներով: Բեռնատարները ձեռք բերելիս հատուկ ուշադրություն է դարձվել վարորդի հարմարավետությանը:

«Ակբա Լիզինգն ավելի քան 6 տարի համագործակցում է «Պրոմ Գրուպ» ընկերության հետ: Այս համագործակցության շրջանակում ընկերությանը տրամադրվել է շինարարական տեխնիկայի եւ սարքավորումների լիզինգ: Այժմ էլ «Պրոմ Գրուպը» համալրվել է վերջին սերնդի 20 բեռնատարներով, որոնք էականորեն կխթանեն հայկական արտադրանքի արտահանումը»,- նշել է Ակբա Լիզինգի մամակարարների հետ համագործակցության բաժնի ղեկավար Վահագն Շմավոնյանը:

«Պրոմ Գրուպն» այժմ իրականացնում է հողային աշխատանքներ՝ եւս մեկ 10 հեկտար մակերեսով լոլիկի ջերմոցային համալիրի կառուցման համար: Ընդլայնվող ծավալներին զուգահեռ՝ ընկերությունը նախատեսում է մոտ ապագայում ավտոպարկը համալրել եւս 30 նոր բեռնատարներով:

Ակբա Լիզինգի 100% բաժնետերը Ակբա բանկն է:

Ակբա Լիզինգը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ,հայտարարություն,հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ՖԻԼՄԸ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ Է

ԻՆՉՊԵՍ Է ՓՈԽՎԵԼ ԹՐԵՎԻՍ ԲԱՐՔԵՐԻ ԿՅԱՆՔԸ

Հայտնի երաժիշտ եւ Blink-182 խմբի թմբկահար Թրեւիս Բարքերի նոր վավերագրական ֆիլմի հեղինակները պատմում են, որ նրա կյանքում իրական խաղաղությունը հայտնվեց այն բանից հետո, երբ նա սիրահարվեց իր ներկայիս կնոջը՝ Քորթնի Քարդաշյանին:

«Travis Barker: Louder Than Fear» վավերագրական ֆիլմը նկարահանվել է շուրջ տասը տարվա ընթացքում եւ ներկայացնում է Բարքերի կյանքի կարեւոր փուլերը՝ներառյալ 2008 թվականի ավիավթարից հետո ունեցած ծանր հոգեբանական տրավման, ընտանեկան կյանքը եւ երաժշտական կարիերայի վերելքը: Ֆիլմի ռեժիսորներ Ջասթին Քրուքը եւ Մայքլ Դուայերը նշում են, որ մի քանի տարի առաջ կարծում էին, թե ֆիլմն արդեն ավարտված է, սակայն հետագայում հասկացան, որ պատմությունը դեռ ամբողջական չէ:

«Մենք կարծում էինք, որ ավարտուն ֆիլմ ունենք չորս կամ հինգ տարի առաջ, բայց իրականում պատմության միայն կեսն էր պատրաստ: Վերջաբանը բացակայում էր, որովհետեւ Թրեւիսը դեռ չէր գտել իր ներքին խաղաղությունը», - ասել է Քրուքը:

Բարքերը երկար տարիներ պայքարել է 2008 թվականի ողբերգական ավիավթարի հետեւանքների դեմ, որի արդյունքում նրա մոտ զարգացել էր թռիչքների ուժեղ վախ: Ռեժիսորների խոսքով՝ ֆիլմը սկզբում նախատեսված էր որպես տրավման հաղթահարելու պատմություն, սակայն հետագայում նրանք հասկացան, որ իրական թեման տրավմայի հետ ապրելն է, ոչ թե այն ամբողջությամբ հաղթահարելը:

Վերջին տարիներին երաժիշտը վերականգնել է հարաբերությունները իր խմբակիցների հետ, վերադարձել է համերգային շրջագայություններին եւ կրկին սկսել է օգտվել օդային փոխադրամիջոցներից: Այդ փոփոխությունների կարեւոր գործոններից մեկը, ըստ ռեժիսորների, եղել է Քարդաշյանի հետ հարաբերությունը: «Նա միշտ շատ մտերիմ էր իր երեխաների հետ, բայց վերջին տարիներին գտավ իր կյանքի սերը, եւ ես տեսա, թե ինչպես նրա մեջ տարածվեց հանգստությունն ու թեթեւությունը», - նշել է Քրուքը: Իր հերթին Բարքերը խոստովանել է, որ երկար ժամանակ չէր ցանկանում, որ վավերագրական ֆիլմը ցուցադրվեր, քանի որ այն չուներ իր պատկերացրած ավարտը: Նա համոզված էր, որ ֆիլմի իրական ավարտը պետք է լիներ իր վերադարձը ինքնաթիռ:

«Գիտեի, որ այս ֆիլմի ավարտը պետք է լինի այն պահը, երբ ես կրկին նստեմ ինքնաթիռ եւ առերեսվեմ իմ վախին: Չգիտեի՝ դա երբեւէ հնարավոր կլինի, թե ոչ: Բայց տարիներ անց սիրահարվեցի իմ լավագույն ընկերներից մեկին, եւ հրաշալի բաներ սկսեցին տեղի ունենալ», - ասել է Բարքերը:

Երաժիշտը նաեւ ընդգծել է, որ կնոջ եւ երեխաների աջակցությունը վճռորոշ դեր է ունեցել իր վերականգնման ճանապարհին:

«Կինս բազմիցս դիտել է վավերագրական ֆիլմը, որդիս՝ Լենդոնը, մասնակցել է դրա վերաբերյալ հարցազրույցների: Նրանք բոլորը մեծ աջակցություն են ցուցաբերել, եւ առանց նրանց սիրո ես այստեղ չէի լինի», - նշել է նա:

«Travis Barker: Louder Than Fear» վավերագրական ֆիլմի պրեմիերան նախատեսված է օգոստոսի 13-ին՝ Hulu եւ Disney+ հարթակներում:

ՆՈՐ ՁԵՎԱՉԱՓ

Ֆուտբոլի 2026 թվականի աշխարհի առաջնությունը պատմության մեջ առաջինն է, որին մասնակցում է 48 ազգային հավաքական: Մասնակիցների նման աննախադեպ աճը հանգեցրել է մրցաշարի ձեւաչափի գլոբալ փոփոխությունների՝ հատկապես փլեյ-օֆֆ փուլում, գրում է armsport-ը:

Ըստ նոր կանոնակարգի՝ խմբային փուլում բոլոր 48 հավաքականները բաժանված են 12 խմբի՝ յուրաքանչյուրում ներառելով չորսական թիմ: Յուրաքանչյուր հավաքական իր քառյակում կանցկացնի երեք հանդիպում: Խմբային փուլի արդյունքներով ուղիղ կերպով փլեյ-օֆֆ դուրս կգան յուրաքանչյուր խմբում առաջին եւ երկրորդ տեղերը զբաղեցրած թիմերը՝ ապահովելով 24 ուղեգիր: Մնացած ութ տեղերը բաժին կհասնեն այն հավաքականներին, որոնք լավագույն արդյունքը ցույց կտան խմբերում երրորդ հորիզոնականը զբաղեցրած թիմերի շարքում:

Այսպիսով, ԱԱ-2026-ի փլեյ-օֆֆում պայքարը կշարունակի միանգամից 32 հավաքական, ինչը գլխավոր տարբերությունն է նախորդ Մունդիալներից, որտեղ արդեն իսկ ավանդական դարձած փլեյ-օֆֆը սկսում էին 16 թիմեր: Այս ընդլայնված ձեւաչափի պատճառով ավելացել է նոր փուլ՝ 1/16 եզրափակիչը: Սկսած այս հատվածից՝ մրցաշարն անցկացվելու է դասական օլիմպիական համակարգով, որտեղ պարտվող թիմն անմիջապես լքում է պայքարը: 1/16 եզրափակիչին կհաջորդեն 1/8 եզրափակիչը, քառորդ եզրափակիչը, կիսաեզրափակիչը, երրորդ տեղի համար մխիթարական հանդիպումը եւ, իհարկե, մեծ եզրափակիչը:

Նոր համակարգը ենթադրում է նաեւ անցկացվելիք հանդիպումների ռեկորդային ցուցանիշ. մրցաշարի շրջանակներում ընդհանուր առմամբ կկայանա 104 խաղ:

Հիշեցնենք, որ այս մասշտաբային առաջնությունը համատեղ հյուրընկալում են երեք երկրներ՝ Միացյալ Նահանգները, Կանադան եւ Մեքսիկան: Տարվա գլխավոր ֆուտբոլային իրադարձության եզրափակիչ հանդիպումը նախատեսված է անցկացնել հուլիսի 19-ին:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՀԱԿԱՌԵԿՈՐԴ

Պորտուգալիայի ազգային հավաքականն աշխարհի առաջնության մեկնարկում հիասթափեցրեց իր երկրպագուներին, գրում է armsport-ը: Ռոբերտո Մարտինեսի գլխավորած թիմը Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետության ընտրանու դեմ խաղում բավարարվեց միայն ոչ-ոքի արդյունքով՝ 1-1: Անգույն հանդիպում անցկացրեց նաեւ Կրիշտիանու Ռոնալդուն, որն այժմ հայտնվել է քննադատությունների թիրախում: Միեւնույն ժամանակ, վիճակագրական տվյալները փաստում են, որ պորտուգալացին այս խաղում հակառեկորդ է սահմանել Եվրոպայի եւ աշխարհի առաջնությունների այն հանդիպումների հաշվարկով, որոնցում խաղադաշտում անցկացրել է ամբողջ 90 րոպեն: Ռոնալդուն գնդակին դիպել է ընդամենը 25 անգամ, ինչը նրա վատագույն ցուցանիշն է խոշոր մրցաշարերում Պորտուգալիայի հավաքականի կազմում անցկացրած ամբողջական խաղերում, հաղորդում է Opta վիճակագրական ռեսուրսը:

ՆՈՐ ՍԿԱՆԴԱԼ

«Բարսելոնան» հանդես է եկել պաշտոնական հայտարարությամբ՝ ի պատասխան Մադրիդի «Ռեալի» եւ ակումբի նախագահ Ֆլորենտինո Պերեսի վերջին հայտարարությունների, գրում է armsport-ը: Ավելի վաղ մադրիդյան ակումբը դիմել էր ՈՒԵՖԱ-ին՝ Խոսե Նեգրեյրայի աղմկահարույց գործի առնչությամբ: Հիշեցնենք, որ կատալոնական ակումբը 7,3 մլն եվրո էր վճարել Նեգրեյրային այն ժամանակահատվածում, երբ վերջինս պաշտոն էր զբաղեցնում Իսպանիայի մրցավարական կոմիտեում: «Մենք նամակներ ենք հղել Լա Լիգայի նախագահին, Իսպանիայի ֆուտբոլի ֆեդերացիայի եւ մրցավարների տեխնիկական կոմիտեի ղեկավարությանը՝ կապված «Ռեալի» նախագահ Ֆլորենտինո Պերեսի հայտարարությունների հետ: «Բարսելոնան» նրա խոսքերը համարում է ոչ միայն իրականությանը չհամապատասխանող, այլեւ վնաս հասցնող թե՛ առաջնությանը եւ թե՛ մրցավարական համակարգին: Նման խոսքերն արատավորում են Իսպանիայի ողջ պրոֆեսիոնալ ֆուտբոլը եւ խարխլում վստահությունը դրա նկատմամբ: Մենք կոչ ենք անում առաջնության եւ մրցավարական համակարգի պատասխանատուներին պաշտպանել իրենց կառույցների հեղինակությունը՝ պարոն Պերեսի դեմ համապատասխան իրավական միջոցներ ձեռնարկելու ճանապարհով»,- ասվում է «Բարսելոնայի» պաշտոնական հաղորդագրության մեջ:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Կորել է Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Մեխանիկական ֆակուլտետի «Ռոբոտատեխնիկական սիստեմներ եւ համակարգեր» բաժնի 1988-1993թթ. շրջանավարտ Նադեժդա Սերգեյի Ավշարովայի դիպլոմը: Դիպլոմ ШВ № 690202 գրանցման № 78597:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Կորել է «Շինարվեստ» ՍՊԸ-ին պատկանող AIMIX AS մակնիշի բետոնախառնիչի (պետհամարանիշ՝ 3789 LL) տեխնիկական վկայագիրը:

● *Հ.Թումանյանի անվան ազգային տիկնիկային թատրոնում հունիսի 21-ին՝ ժամը 17:00-ին, կկայանա «Բժիշկ Մաշայի new արկածները» տիկիկային ներկայացումը:*

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ինչքա՞ն է կազմում անհուսալի վարկեր ունեցող անձանց տնտեսական ակտիվության խթանման միջոցառման շահառուի վարկային պարտավորության (պարտավորությունների) մարմանն ուղղվող (բռնագանձվող) ամենամսյա գումարի չափը:

Անի Սարգսյան, 54 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Միջոցառման շրջանակում շահառուին տրվում է ֆինանսական աջակցություն՝ շահառուի աշխատավարձից եւ դրան հավասարեցված վճարումներից (քաղաքացիաիրավական պայմանագրի շրջանակներում ստացված եկամտից) հաշվարկված եկամտային հարկի գումարի 100%-ի չափով, որն ուղղվում է անհուսալի վարկային պարտավորության (պարտավորությունների) մարմանը:

ՀԿԱ ծառայության կողմից շահառուի նկատմամբ վարկավորողի ներկայացրած՝ հարկադիր կատարման ենթակա ակտերի կատարման ընթացքում անհուսալի վարկի մասով՝

շահառուի աշխատավարձից (քաղաքացիաիրավական պայմանագրի շրջանակներում ստացված եկամտից) բռնագանձվող գումարի չափը սահմանվում է 20% (եթե օրենքով կամ կատարման ենթակա ակտով բռնագանձման առավել նվազ չափ սահմանված չէ)՝24 ամիս ժամկետով՝ սկսած շահառու ճանաչվելու վերաբերյալ տեղեկատվությունը ստանալուն հաջորդող ամսվա 1-ից.

շահառուի գույքերի նկատմամբ իրականացվող բռնագանձումները կասեցվում են՝ առանց դրանց նկատմամբ առկա արգելանքների վերացման, եթե առկա չեն այլ պահանջատերեր:

Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն
Միասնական սոցիալական ծառայություն

Էջը՝ ՄԱՐԻԱՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ո՞ր դեպքերում է զորակոչիկին տարկետում տրվում՝ ընտանեկան պայմաններից ելնելով:

Սերոբ Ազիզյան, 47 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. *(Սկիզբը՝ նախորդ համարում)*

3. Քաղաքացին համարվում է միայնակ ծնող ունեցող, եթե՝

1) մյուս ծնողը մահացել է կամ դատական կարգով ճանաչվել է մահացած.

2) մյուս ծնողն անհայտ է (օրենքով սահմանված կարգով հայրություն կամ մայրություն չի ճանաչվել) կամ դատական կարգով ճանաչվել է անհայտ բացակայող.

3) մինչեւ քաղաքացու 18 տարին լրանալն առնվազն հինգ տարի առաջ ծնողներն ամուսնալուծվել են, եւ ծնողները բնակվում են միմյանցից առանձին.

4) ծնողների ամուսնությունն օրենքով սահմանված կարգով չի գրանցվել, եւ ծնողները բնակվում են միմյանցից առանձին:

4. Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության զորակոչից «Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերով չնախատեսված դեպքերում քաղաքացուն ընտանեկան պայմաններից ելնելով տարկետում կարող է տրվել քաղաքացու դիմումի հիման վրա եւ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի հրամանով՝ «Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածով սահմանված կարգով:

5. «Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «բ» ենթակետով նախատեսված դեպքում քաղաքացուն տարկետում տրվում է մինչեւ նրա ծնողների կամ միայնակ ծնողի այլ զավակի 18 տարին լրանալու կամ պարտադիր զինվորական ծառայությունից արձակվելու օրը, իսկ 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված դեպքում՝ մինչեւ երկրորդ երեխայի կամ առնվազն զույգ երեխաների ծննդյան օրը: «Զինվորական ծառայության եւ զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերով նախատեսված մյուս դեպքերում քաղաքացուն տարկետում տրվում է մինչեւ նրա 27 տարին լրանալու օրը: Եթե 27 տարին լրանալու օրվա դրությամբ քաղաքացին չի կորցրել ստացած տարկետման իրավունքը, ապա 27 տարին լրանալու հիման վրա ազատվում է պարտադիր զինվորական ծառայությունից:

ՀՀ ՊՆ

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ Գագիկ Շամշյանի

Երեւանում՝ Ֆրանսիայի հրապարակում, բախվել են «Range Rover»-ը եւ օտարերկրացի տղամարդու վարած «Honda» մոպեդը. մոպեդավարը տեղափոխվել է հիվանդանոց:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը:
Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ________________
Ազգանուն՝ ________________
Առաքման հասցե՝ ________________
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ ________________

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	Շիրակ	+ 9 + 14 + 22 + 27
	Կոտայքի լեռներ	+ 10 + 13 + 22 + 25
	Կոտայքի նախալեռներ	+ 17 + 20 + 27 + 30
	Գեղարքունիք	+ 9 + 13 + 22 + 25
	Լոռի	+ 11 + 15 + 23 + 26
	Տավուշ	+ 13 + 16 + 23 + 26
	Արագածոտնի լեռներ	+ 7 + 11 + 20 + 24
	Արագածոտնի նախալեռներ	+ 15 + 20 + 26 + 31

	Արարատ	+ 17 + 20 + 30 + 33
	Արմավիր	+ 18 + 21 + 31 + 34
	Վայոց ձորի լեռներ	+ 9 + 13 + 23 + 26
	Վայոց ձորի նախալեռներ	+ 17 + 21 + 31 + 35
	Սյունիքի լեռներ	+ 8 + 12 + 21 + 24
	Սյունիքի նախալեռներ	+ 11 + 15 + 24 + 28
	Սյունիքի հովիտներ	+ 17 + 22 + 31 + 34
	Երեւան	+ 18 + 20 + 32 + 34

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **18.06.2026**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*